Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-788-01.03.2024-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը՝

1) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) **անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթուղթ՝** անասնաբուժական սերտիֆիկատ, անասնաբուժական վկայական, անվտանգության սերտիֆիկատ, առողջության սերտիֆիկատ, որակի և անվտանգության կառավարման համակարգի սերտիֆիկատ, բուսասանիտարական հավաստագիր, համապատասխանության հայտարարագիր, պետական գրանցման վկայական.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 22-ին և 23-րդ կետերով.

«22) **վերահսկվող ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման թույլատվական փաստաթղթեր՝** անասնաբուժական սերտիֆիկատ, բուսասանիտարական հավաստագիր, անվտանգության սերտիֆիկատ, առողջության սերտիֆիկատ, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ,

համապատասխանության տեղեկանք, բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ակտ, պեստիցիդների ու ագրոքիմիկատների ներմուծման եզրակացություն.

23) **սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիա՝** ազգային հավատարմագրում ունեցող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռեֆերենսային գործառույթներ իրականացնելու համար լիազորված փորձարկման լաբորատորիա:»:

3) 2-րդ մասի 9-րդ կետից հանել «բույսերի պաշտպանության միջոցների, պարարտանյութերի,» բառերը.

4) 2-րդ մասի 10-րդ կետում բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի» բառերը փոխարինել «պեստիցիդների և ագրոքիմիկատների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5.1-ին հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով.

«2. Համապատասխան նախարարությունը՝

1) իրականացնում է կերային հավելումների գրանցումը, մերժումը, կասեցումը և դադարեցումը.
2) իրականացնում է կերային հավելումների ռեեստրի վարումը:»:

Հոդված 3. Օրենքի 5.2-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1) 6-րդ կետում «թույլտվություն» բառից հետո լրացնել «,վերահսկվող ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման թույլատվական փաստաթղթեր» բառերը:».

2) 32-րդ կետից հանել «բույսերի պաշտպանության միջոցների, պարարտանյութերի,» բառերը.

3) 33-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում. «որին նշանակում է Կառավարությունը» բառերը փոխարինել «որին լիազորություններ տրվում, կասեցվում կամ դադարեցվում են Կառավարության սահմանած կարգով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված, պիտանիության ժամկետն անցած, մակնշմանը ներկայացվող պահանջների խախտումներով, ինչպես նաև նմուշառման և լաբորատոր փորձաքննության արդյունքում սահմանված պահանջներին ազդող նյութի պարունակության անհամապատասխանության դեպքում՝ պեստիցիդների և ագրոքիմիկատների իրացման (վաճառքի) կասեցում.»:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Օրենքով սահմանված վտանգավոր համարվող, ինչպես նաև ըստ անհրաժեշտության լաբորատոր փորձաքննության արդյունքում վտանգավոր համարված սննդամթերքը շուկայից հետ է կանչվում և ոչնչացվում կամ օգտահանվում է Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 7. Օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «կամ ստուգման ակտի ընդունումը» բառերը:

Հոդված 8.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը՝

3) 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) **անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթուղթ՝** անասնաբուժական սերտիֆիկատ, անասնաբուժական վկայական, անվտանգության սերտիֆիկատ, առողջության սերտիֆիկատ, որակի և անվտանգության կառավարման համակարգի սերտիֆիկատ, բուսասանիտարական հավաստագիր, համապատասխանության հայտարարագիր, պետական գրանցման վկայական.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 22-ին և 23-րդ կետերով.

«22) **վերահսկվող ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման թույլատվական փաստաթղթեր՝** անասնաբուժական սերտիֆիկատ, բուսասանիտարական հավաստագիր, անվտանգության սերտիֆիկատ, առողջության սերտիֆիկատ, օրգանական գյուղատնտեսական արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատ, համապատասխանության տեղեկանք, բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ակտ, պեստիցիդների ու ագրոքիմիկատների ներմուծման եզրակացություն.

23) **սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ազգային ռեֆերենս փորձարկման լաբորատորիա՝** ազգային հավատարմագրում ունեցող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռեֆերենսային գործառույթներ իրականացնելու համար լիազորված փորձարկման լաբորատորիա:»:

3) 2-րդ մասի 9-րդ կետից հանել «բույսերի պաշտպանության միջոցների, պարարտանյութերի,» բառերը.

4) 2-րդ մասի 10-րդ կետում բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի» բառերը փոխարինել «պեստիցիդների և ագրոքիմիկատների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5.1-ին հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով.

«2. Համապատասխան նախարարությունը՝

3) իրականացնում է կերային հավելումների գրանցումը, մերժումը, կասեցումը և դադարեցումը.
4) իրականացնում է կերային հավելումների ռեեստրի վարումը:»:

Հոդված 3. Օրենքի 5.2-րդ հոդվածի 3-րդ մասի՝

1) 6-րդ կետում «թույլտվություն» բառից հետո լրացնել «,վերահսկվող ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման թույլատվական փաստաթղթեր» բառերը:».

2) 32-րդ կետից հանել «բույսերի պաշտպանության միջոցների, պարարտանյութերի,» բառերը.

3) 33-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում. «որին նշանակում է Կառավարությունը» բառերը փոխարինել «որին լիազորություններ տրվում, կասեցվում կամ դադարեցվում են Կառավարության սահմանած կարգով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված, պիտանիության ժամկետն անցած, մակնշմանը ներկայացվող պահանջների խախտումներով, ինչպես նաև նմուշառման և լաբորատոր փորձաքննության արդյունքում սահմանված պահանջներին ազդող նյութի պարունակության անհամապատասխանության դեպքում՝ պեստիցիդների և ագրոքիմիկատների իրացման (վաճառքի) կասեցում.»:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Օրենքով սահմանված վտանգավոր համարվող, ինչպես նաև ըստ անհրաժեշտության լաբորատոր փորձաքննության արդյունքում վտանգավոր համարված սննդամթերքը շուկայից հետ է կանչվում և ոչնչացվում կամ օգտահանվում է Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 7. Օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «կամ ստուգման ակտի ընդունումը» բառերը:

Հոդված 8. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված ենթաօրենսդրական նորմատիվ

իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-788-01.03.2024-ՏՏԳՇ-011/1), ««ԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-788[1]-01.03.2024-ՏՏԳՇ-011/1) ԵՎ ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» (Կ-788[2]-01.03.2024-ՏՏԳՇ-011/1) ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-788-01.03.2024-ՏՏԳՇ-011/1)					
.	Կառավարություն	ին հոդված	ին հոդվածի 22-րդ կետում ագրոքիմիկատների» բառերից հետո լրացնել «ներմուծման» բառը՝ համապատասխանեցնելով	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրենքի 18-րդ հոդվածին:		
	Կառավարություն	ին հոդված	ին հոդվածի 23-րդ կետում բառերից հետո լրացնել «փորձարկման» բառը՝ համապատասխանեցնելով օրենքի 28-րդ հոդվածին:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Կառավարություն	րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-788[1]-01.03.2024-ՏՏԳՇ-011/1)					
	Կառավարություն	4-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է: